Արձանագրություն N 3
«ՋԿ-ԳՀԾՁԲ-22/8-Տ» ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 31 Հոկտեմբեր 2022թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Ասրյանը,
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Սիմոնյանը, Ս. Միրոյանը և Գ. Մելիքսեթյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

Մասնակից ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար ոռոգման համակարգերի հիմնանորոգման աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության ծառայությունների գնման ՋԿ-ԳՀԾՁԲ-22/8-Տ ծածկագրով ընթացակարգի մասնակիցներ «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի և «Ռիջիդ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են գնահատող հանձնաժողովի 27.05.2022թ. թիվ 2 որոշմամբ պահանջված փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերով ընթացակարգի մասնակիցներ «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի և «Ռիջիդ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի որոշումը

Փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը որոշեց.

1. ՋԿ-ԳՀԾՁԲ-22/8-Տ ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ ճանաչել.
   1. «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ,
   2. «Ռիջիդ» ՍՊԸ,
   3. «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ:
2. ՋԿ-ԳՀԾՁԲ-22/8-Տ ծածկագրով ընթացակարգի 2-րդ չափաբաժնի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ ճանաչել.
   1.«Ռիջիդ» ՍՊԸ,
   2. «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ:
3. Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ Ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը

հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը,

4. Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել 1-ին չափաբաժնի ընտրված մասնակից «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ին և 2-րդ չափաբաժնի ընտրված մասնակից «Ռիջիդ» ՍՊԸ-ին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ ---------- Ս. Ասրյան

Անդամներ ---------- Ա. Սիմոնյան

---------- Ս. Միրոյան

---------- Գ. Մելիքսեթյան

Քարտուղար ---------- Ա. Սարգսյան